Հովհաննես Հովհաննիսյան

Վահագնի ծնունդը

Երկնեց երկինք և երկիր,

Երկնեց և ծով ծիրանի,

Եվ եղեգնիկը կարմիր

Երկնեց ծովում ծիրանի

Ծուխ է դուրս գալիս եղեգան փողից,

Բոց է դուրս գալիս եղեգան փողից,

Բոցն է պատել կարմիր եղեգնիկ,

Բոց է դարձել և ծով ծիրանի.

Կարմիր բոցիցն ահա մի մանկիկ,

Վահագն ահա՛ – մանուկ գեղանի:

Բոց մորուքով,

Հուր շրթունքով,

Հուր հեր գլխին — հրեղեն պսակ,

Եվ աչերն են զույգ արեգակ:

Ալեծուփ ծովի ծիրանի ալիք

Գնում են գալիս, ծեծում են ափունք,

Ահեղամռունչ գոռում է մանկիկ,

Սաստում է ալյացն հրավառ շրթունք:

Վահագն ծնավ, լռեցեք ալի՛ք.

Դու ծովահալած, դադար առ մրրի՛կ:

Թևերն ոսկեհուռ, հրահեր բաշով

Նժույգը տակին՝ սլացավ վերև —

Երեսըդ ծածկի՛ր համեստ շղարշով,

Տե՛ս, ո՞վ է գալիս, և դո՛ւ, հո՛ւր արև.

Գլուխդ ալևոր, քաջածի՛ն Մասիս,

Դու էլ խոնարհի՛ր, Վահագն է գալիս:

Երկինք ու երկիր և ծիրանի ծով

Ավետում են քեզ, ցավերի դու ծո՛վ՝

Ցնծա՛, բյուր վիշապ Հայաստան աշխարհ,

Փրկության արև Վահագնիդ տեսար: